

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
«17» մայիսի 2019 թվականին
Պետական գրանցման համարը 1011938
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարար
Ա. Դանիելյան

**Ա Ր Ց Ա Խ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ Ո Ւ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

Հ Ր Ա Մ Ա Ն

«3» մայիսի 2019թ.

N 104-Ն

ք. Ստեփանակերտ

Հ Ր Ա Մ Ա Ն

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՐՄՐՈՒԿԻ, ԿԱՐՄՐԱԽՏԻ ԵՎ ԲՆԱԾԻՆ
ԿԱՐՄՐԱԽՏԱՅԻՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ» ՄԿ N
3.1.1-015-19 ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 16-ի
N 90 որոշմամբ հաստատված հավելված 1-ի 9-րդ կետի 20-րդ ենթակետին
համապատասխան՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հաստատել «Արցախի Հանրապետությունում կարմրուկի, կարմրախտի և բնածին
կարմրախտային համախտանիշի համաճարակաբանական հսկողություն» ՄԿ N 3.1.1-015-19
սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող
տասներորդ օրը:

Ա. ԲԱՂՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՐՄՐՈՒԿԻ, ԿԱՐՄՐԱԽՏԻ ԵՎ ԲՆԱԾԻՆ
ԿԱՐՄՐԱԽՏԱՅԻՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ
N 3.1.1-015-19 ՍԱՆԻՏԱՐԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՎ ՆՈՐՄԵՐ**

**Բ Ա Ժ Ի Ն 1
ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ**

1. Կարմրուկի, կարմրախտի և բնածին կարմրախտային համախտանիշի համաճարակաբանական հսկողության սույն սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը (այսուհետ՝ կանոններ) նախատեսված են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների համար (այսուհետ՝ կազմակերպություն)՝ անկախ կազմակերպաիրավական ձևից և գերատեսչական պատկանելությունից:

2. Սույն սանիտարահամաճարակային կանոնները ներառում են կարմրուկի, կարմրախտի և բնածին կարմրախտային համախտանիշի դեպքերի հայտնաբերման, ախտորոշման, դեպքերի վարման, կարմրուկի և կարմրախտի դեմ կանխարգելիչ պատվաստումների, կոնտակտավորների բժշկական հսկողության և այլ հարցեր, որոնք ուղղված են կարմրուկի, կարմրախտի և բնածին կարմրախտային համախտանիշի համաճարակաբանական հսկողության ապահովմանը:

Բ Ա Ժ Ի Ն 2

**ԿԱՐՄՐՈՒԿՈՎ, ԿԱՐՄՐԱԽՏՈՎ ԵՎ ԲՆԱԾԻՆ ԿԱՐՄՐԱԽՏԱՅԻՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇՈՎ
ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԿԱՍԿԱԾՈՎ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ,
ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Գ Լ ՈՒ Խ 1

**ԿԱՐՄՐՈՒԿՈՎ ԿԱՍ ԿԱՐՄՐԱԽՏՈՎ ԿԱՍ ԲՆԱԾԻՆ ԿԱՐՄՐԱԽՏԱՅԻՆ
ՀԱՄԱԽՏԱՆԻՇՈՎ/ԿԱՐԱԿՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ**

3. Կարմրուկով կամ կարմրախտով կամ բնածին կարմրախտային համախտանիշով դեպքերի հայտնաբերումն իրականացվում է պասիվ և ակտիվ ձևերով:

4. Կարմրուկով կամ կարմրախտով կամ բնածին կարմրախտային համախտանիշով հիվանդների, ինչպես նաև հիվանդության կասկածով անձանց պասիվ հայտնաբերումն իրականացնում են կազմակերպությունների բոլոր մասնագիտությունների բուժաշխատողները հետևյալ դեպքերում՝

- 1) երբ բնակչությունը դիմում է բժշկական օգնության.
- 2) տնային պայմաններում բժշկական օգնություն ցուցաբերելիս.
- 3) մասնավոր բժշկական գործունեություն իրականացնող բժշկի ընդունելության ժամանակ.

4) կարմրուկով կամ կարմրախտով հիվանդների հետ շփված անձանց նկատմամբ բժշկական հսկողություն իրականացնելիս.

5) սույն կանոնների ենթահավելված 1-ում ներկայացված դեպքի ստանդարտ բնորոշումներին համապատասխանող անձանց լաբորատոր հետազոտություններն (այդ թվում նաև՝ կարմրուկի կամ կարմրախտի նկատմամբ) իրականացնելիս:

5. Սույն կանոնների ենթահավելված 1-ում ներկայացված դեպքի ստանդարտ բնորոշումներին համապատասխանող յուրաքանչյուր կասկածելի դեպք հետազոտվում է (կլինիկական, համաճարակաբանական և լաբորատոր) կարմրուկի կամ կարմրախտի կամ բնածին կարմրախտային համախտանիշի նկատմամբ:

6. Կարմրուկով կամ կարմրախտով կամ բնածին կարմրախտային համախտանիշով կասկածելի դեպքերի հոսպիտալացման ուղեգրի ձևաթղթում, բացի անձնական տվյալներից նշվում են նաև հիվանդության առաջնային ախտանշանները, ցանի դրսևորման ժամկետը, կանխարգելիչ պատվաստումների, կոնտակտավորների, հիվանդի կարմրուկի կամ կարմրախտի առումով անբարենպաստ տարածք մեկնելու կամ ժամանելու վերաբերյալ տեղեկատվությունը:

7. Ստացիոնարում հիվանդության պատմության «Համաճարակաբանական վերհուշ» բաժնում նշվում են հիվանդության առաջնային ախտանշանները, ցանի դրսևորման ժամկետը, կանխարգելիչ պատվաստումների, կոնտակտավորների, հիվանդի կարմրուկի կամ կարմրախտի առումով անբարենպաստ տարածք մեկնելու կամ ժամանելու վերաբերյալ տեղեկատվությունը:

8. Կարմրուկի կամ կարմրախտի կամ բնածին կարմրախտային համախտանիշի յուրաքանչյուր կասկածելի դեպք ենթակա է լաբորատոր հետազոտության և հաստատման՝ համաձայն սույն կանոնների ենթահավելվածներ 1-ի և 2-ի:

Գ Լ ՈՒ Խ 2

ԿԱՐՄՐՈՒԿԻ ԿԱՄ ԿԱՐՄՐԱԽՏԻ ԿԱՄ ԲՆԱԾԻՆ ԿԱՐՄՐԱԽՏԱՅԻՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ԴԵՊՔԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ, ՀԱՂՈՂՈՒՄ, ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

9. Կարմրուկի կամ կարմրախտի կամ բնածին կարմրախտային համախտանիշի յուրաքանչյուր կասկածելի դեպքի մասին, հայտնաբերող բուժանձնակազմի (այդ թվում՝ լաբորատորիայի անձնակազմ) կողմից անմիջապես հեռախոսով տրվում է շտապ հաղորդում Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչություն (այսուհետ՝ տեսչություն), «Համաճարակաբանության և հիգիենայի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ «ՀՀԿ» ՊՈԱԿ) և «ՀՀԿ» ՊՈԱԿ-ի շրջանային բաժիններ, այնուհետև՝ 24 ժամվա ընթացքում ուղարկելով շտապ հաղորդման ձև «ՇՀ 1»՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության 2009 թվականի մարտի 31-ի թիվ 55-Ն հրամանի, բացառությամբ՝ «Արևիկ» բուժմիավորում, «Հանրապետական բժշկական կենտրոն» և «Ստեփանակերտի շտապ բժշկական օգնության կայան» փակ բաժնետիրական ընկերությունների, որոնք հաղորդում են «ՀՀԿ» ՊՈԱԿ:

10. Տեսչության կողմից կասկածելի դեպքի վերաբերյալ հաղորդում ստանալուց հետո անմիջապես կատարվում է հաղորդում «ՀՀԿ» ՊՈԱԿ:

11. «ՀՀԿ» ՊՈԱԿ-ը դեպքի վերաբերյալ հեռախոսով հաղորդում է տեսչություն:

12. Դեպքի ախտորոշումը փոփոխելու (կամ ժխտելու) կամ հաստատելու կամ մահվան մասին բուժանձնակազմի կողմից անմիջապես տրվում է հեռախոսով շտապ հաղորդում «ՀՀԿ» ՊՈԱԿ և «ՀՀԿ» ՊՈԱԿ-ի շրջանային բաժիններ, այնուհետև՝ 24 ժամվա ընթացքում ուղարկելով նոր շտապ հաղորդման ձև (ՇՀ 1)՝ նշելով սկզբնական ախտորոշումը, փոխված (կամ ժխտված) կամ հաստատված ախտորոշման կամ մահվան ամսաթիվը և լաբորատոր հետազոտման արդյունքները բացառությամբ՝ «Արևիկ» բուժմիավորում և «Հանրապետական բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների, որոնք հաղորդում են «ՀՀԿ» ՊՈԱԿ:

13. Տեսչության կողմից ախտորոշումը փոփոխված կամ ժխտված կամ հաստատված կամ մահվան դեպքի վերաբերյալ շտապ հաղորդում ստանալուց հետո անմիջապես կատարվում է հաղորդում «ՀՀԿ» ՊՈԱԿ:

14. «ՀՀԿ» ՊՈԱԿ-ը ախտորոշումը փոփոխված կամ ժխտված կամ հաստատված կամ մահվան դեպքի վերաբերյալ հեռախոսով հաղորդում է տեսչություն:

15. Կարմրուկի կամ կարմրախտի կամ բնածին կարմրախտային համախտանիշի դեպքերի լիարժեք, հավաստի և ժամանակին հաշվառումը, գրանցումը, հաղորդումը, հաշվետվությունների ամբողջականությունը, նաև լիովին և օպերատիվ հաղորդումը տեսչություն, «ՀՀԿ» ՊՈԱԿ և «ՀՀԿ» ՊՈԱԿ-ի շրջանային բաժիններ, ապահովում են կազմակերպությունների ղեկավարները:

16. Բոլոր կազմակերպություններում կարմրուկի կամ կարմրախտի կամ բնածին կարմրախտային համախտանիշի յուրաքանչյուր կասկածելի դեպք գրանցվում և հաշվառվում է «Վարակիչ, այդ թվում՝ մակարուծային հիվանդությունների հաշվառման մատյանում»՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 6-ի N 225-Ն հրամանի:

17. Կարմրուկի կամ կարմրախտի կամ բնածին կարմրախտային համախտանիշի կամ բնածին կարմրախտային վարակի լաբորատոր հաստատված դեպքերի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են կառավարելի վարակիչ հիվանդությունների «Ձև N Պ-4/հ» վարչական վիճակագրական ձևով՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի մայիսի 14-ի N 134-Ա հրամանի: «Կարմրախտ» տողի դիմաց համարիչում ներկայացվում են կարմրախտի դեպքերի թիվը, իսկ հայտարարում՝ բնածին կարմրախտային համախտանիշի կամ բնածին կարմրախտային վարակի դեպքերի թիվը:

18. Բոլոր մակարդակներում դեպքերի բացակայության պայմաններում ներկայացվում է զրոյական հաշվետվություն: Յուրաքանչյուր հիվանդության տողում «Ընդամենը» սյունակում նշվում է 0:

19. Բոլոր մակարդակներում պահպանվում են հաշվետվության կրկնօրինակները՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 27-ի N 357 որոշման:

Բ Ա Ժ Ի Ն 3

ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Գ Լ ՈՒ Խ 3

ՎԱՐԱԿԻ ԱՂԲՅՈՒՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

20. Կարմրուկով կամ կարմրախտով կամ բնածին կարմրախտային համախտանիշով հաստատված կամ կասկածելի հիվանդներին՝ կլինիկական ընթացքի բարդությունից կախված ցուցաբերվում է հիվանդանոցային կամ արտահիվանդանոցային բժշկական օգնություն և նրանց նկատմամբ սահմանվում է բժշկական հսկողություն:

21. Հիվանդները հոսպիտալացվում են ինֆեկցիոն հիվանդանոցների (բաժանմունք) բոքսային բաժիններում (բաժանմունք) կամ կյանքի ցուցումով սոմատիկ հիվանդանոցների վերակենդանացման բաժինների բոքսերում:

22. Կարմրախտի կասկածով կամ լաբորատոր հաստատված ախտորոշումով հղի կանանց բժշկական հսկողությունն իրականացվում է հղիության ողջ ընթացքում և հղիության ելքը (բնածին կարմրախտային համախտանիշ կամ անախտանիշ բնածին կարմրախտ կամ պտղի մահ բնածին կարմրախտային վարակից կամ ինքնաբեր վիժում կամ նորմալ երեխայի ծնունդ և այլն) գրանցվում է բժշկական փաստաթղթերում (հղիի հսկողության կամ հիվանդության պատմություն և այլն):

23. Կարմրախտի կասկածով կամ լաբորատոր հաստատված ախտորոշումով կանանց նորածինները հետազոտվում են կարմրախտի նկատմամբ՝ համաձայն սույն կանոնների ենթահավելված 1-ի:

24. Կարմրուկով կամ կարմրախտով կամ բնածին կարմրախտային համախտանիշով կամ վարակով հաստատված կամ կասկածելի դեպքերի լաբորատոր հետազոտության համար նմուշառումը կատարվում է համաձայն սույն կանոնների ենթահավելված 2-ի:

25. Կարմրուկով կամ կարմրախտով բոլոր հիվանդներն, որոնք հայտնաբերվել են նախադպրոցական կամ դպրոցական կամ միջին կամ բարձրագույն ուսումնական կազմակերպություններում կամ մանկական հանգստյան և այլ կազմակերպություններում մեկուսացվում են ցանավորման սկզբից հաշված չորս օր՝ կարմրուկի և յոթ օր՝ կարմրախտի դեպքում, իսկ կարմրուկի բարդությունների (թոքաբորբ) դեպքում՝ տասը օր տևողությամբ:

26. Հիվանդանոցում կարմրուկով հիվանդի մեկուսացումը կիրառվում է հիվանդության նախանշանային փուլում կատառալ երևույթների դրսևորումից սկսած մինչև ցանավորումից հետո չորս օր կամ բարդությունների (թոքաբորբ) առկայության պայմաններում՝ տասը օր տևողությամբ: Կարմրախտով հիվանդի մեկուսացումը սահմանվում է հիվանդության նախանշանային փուլում կատառալ երևույթների դրսևորումից սկսած մինչև ցանավորումից հետո յոթ օր տևողությամբ:

27. Բնածին կարմրախտային վարակով մինչև 12 ամսական երեխաները մեկուսացվում են մինչև կարմրախտի վիրուսազատման դադարումը (հետազոտությունները կատարվում են յուրաքանչյուր ամիս):

Գ Լ ՈՒ Խ 4

ԿԱՐՄՐՈՒԿԻ ԿԱՍ ԿԱՐՄՐԱԽՏԻ ԿԱՍ ԲՆԱԾԻՆ ԿԱՐՄՐԱԽՏԱՅԻՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ՕԶԱԽՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

28. Կազմակերպություններում չպատվաստված անձանց առկայության դեպքում սահմանվում է կոնտակտավորների նկատմամբ բժշկական հսկողություն՝ 21 օր տևողությամբ, ինչպես նաև կատարվում է ամենօրյա խոնավ մաքրում և հաճախակի օդափոխում:

29. Վարակի օջախներում (կազմակերպություններում և տնային) հակահամաճարակային միջոցառումներն (հիվանդների բուժօգնություն, շփված անձանց նկատմամբ բժշկական հսկողություն, անհրաժեշտության դեպքում պատվաստումների իրականացում, լաբորատոր նմուշառում, բնակչության շրջանում իրազեկման և քարոզչության աշխատանքներ) իրականացնում են կազմակերպությունների բուժաշխատողները:

Գ Լ ՈՒ Խ 5

ԿԱՐՄՐՈՒԿՈՎ ԵՎ ԿԱՐՄՐԱԽՏՈՎ ԿԱՍ ԲՆԱԾԻՆ ԿԱՐՄՐԱԽՏԱՅԻՆ ՎԱՐԱԿՈՎ ԴԵՊԷՐԻ ՇԵՏ ՇՓՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

30. Լաբորատոր հաստատված կարմրուկով հիվանդի հետ շփված մեկ տարեկանից բարձր չպատվաստված կամ չհիվանդացած (բժշկական փաստաթղթերում չկան տեղեկություններ պատվաստումային կարգավիճակի կամ հիվանդացման փաստի մասին) կամ 6 տարեկանից բարձր չհիվանդացած կամ չպատվաստված (կամ մեկ դեղաչափով պատվաստված (բժշկական փաստաթղթերում չկան տեղեկություններ պատվաստումային կարգավիճակի կամ հիվանդացման փաստի մասին) կոնտակտավորները, հակացուցումների բացակայության դեպքում, պատվաստվում են կարմրուկի դեմ՝ շփման պահից 72 ժամվա ընթացքում կամ իրականացվում է պասիվ իմունականիարգելում հակակարմրուկային իմունագլոբուլինով:

**ԿԱՐՄՐՈՒԿԻ ԵՎ ԿԱՐՄՐԱԽՏԻ ԴԵՍ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

31. Կարմրուկի կամ կարմրախտի դեմ կանխարգելիչ պատվաստումները կազմակերպվում և իրականացվում են համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության 2009 թվականի մարտի 31-ի թիվ 55-Ն հրամանի:

32. Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման նպատակով բուժկանխարգելիչ կազմակերպությունների ղեկավարների կողմից ապահովվում է՝

1) 1 տարեկան (23 ամսական 29 օրական) երեխաների առնվազն 95 տոկոս ընդգրկվածություն՝ առաջին դեղաչափի պատվաստումներում:

2) 6 տարեկան (6 տարեկան 11 ամսական 29 օրական) երեխաների առնվազն 95 տոկոս ընդգրկվածություն՝ երկրորդ դեղաչափի պատվաստումներում:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

**ԿԱՐՄՐՈՒԿԻ, ԿԱՐՄՐԱԽՏԻ ԵՎ ԲՆԱԾԻՆ ԿԱՐՄՐԱԽՏԱՅԻՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ԴԵՊՔԵՐԻ
ԲՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ**

1. Կլինիկական չափանիշներն են՝

- 1) ջերմություն, գումարած,
- 2) տարածուն բծավոր (մակուլապապուլոզ) ցան (ոչ բշտիկային) գումարած,
- 3) հազ, ռինիտ (քթից արտազատություն, հարբուխ) կամ կոնյուկտիվիտ (կարմիր աչքեր):

2. Ախտորոշման լաբորատոր չափանիշներն են՝

- 1) կարմրուկի իմունագլոբուլին Էմ (IgM) հակամարմինների հայտնաբերում կամ,
- 2) կարմրուկի վիրուսի անջատում կամ,
- 3) կարմրուկի վիրուսի ռիբոնուկլեինաթթվի (ՌՆԹ) հայտնաբերում հետադարձ տրանսկրիպցիոն պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) մեթոդով,
- 4) իմունագլոբուլին Ջի (IgG) հակամարմինների տիտրի նշանակալից աճ գույզ շիճուկներում:

3. Կարմրուկի դեպքի դասակարգում

Կասկածելի (կլինիկորեն հաստատված) դեպք	Կլինիկական չափանիշներին համապատասխանող դեպք
Լաբորատոր հաստատված դեպք	Կլինիկական և լաբորատոր չափանիշներին համապատասխանող դեպք
Համաճարակաբանորեն հաստատված դեպք	Կլինիկական չափանիշներին համապատասխանող և հիվանդության սկզբից 7-18 օր առաջ լաբորատոր հաստատված դեպքի հետ համաճարակաբանորեն կապված դեպք
Ժխտված	Կլինիկական չափանիշներին համապատասխանող, բայց բացասական լաբորատոր արդյունք ունեցող դեպք կամ լաբորատոր հաստատված այլ հիվանդությունով (ռոզեոլա, վարակիչ էրիթեմա և այլն) անձի հետ համաճարակաբանական կապ ունեցող դեպք

4. Կարմրախտի դեպքի բնորոշում՝

- 1) կարմրախտի կլինիկական բնորոշման չափանիշներն են՝
 - ա. բծավոր (մակուլապապուլոզ) ցան գումարած,
 - բ. պարանոցային՝ հետծոծրակային, հարականջային ավշային հանգույցների մեծացում կամ,
 - գ. հոդացավ՝ արթրիտ.
- 2) լաբորատոր հաստատման չափանիշները (ոչ հղի դեպքի համար)՝
 - ա. կարմրախտի իմունագլոբուլին Էմ (IgM) հակամարմինների հայտնաբերում կամ,
 - բ. կարմրախտի վիրուսի անջատում կամ,
 - գ. կարմրախտի վիրուսի ռիբոնուկլեինաթթվի (ՌՆԹ) հայտնաբերում հետադարձ տրանսկրիպցիոն պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) մեթոդով,

դ. շճաբանորեն իմունագլոբուլին Ջի (IgG) հակամարմինների տիտրի աճ՝ առնվազն չորս անգամ,

ե. իմունագլոբուլին Ջի (IgG) հակամարմինների տիտրի նշանակալից աճ գույգ շիճուկներում:

5. Կարմրախտի դեպքի դասակարգում

Կասկածելի (կլինիկորեն հաստատված) դեպք	Կլինիկական չափանիշներին համապատասխանող դեպք
Լաբորատոր հաստատված դեպք	Կլինիկական և լաբորատոր չափանիշներին համապատասխանող դեպք
Համաճարակաբանորեն հաստատված դեպք	Կլինիկական չափանիշներին համապատասխանող և հիվանդության սկզբից 12-ից 13 օր առաջ լաբորատոր հաստատված դեպքի հետ համաճարակաբանորեն կապված դեպք
Ժխտված	Կլինիկական չափանիշներին համապատասխանող, բայց բացասական լաբորատոր արդյունք ունեցող դեպք կամ լաբորատոր հաստատված այլ հիվանդությունով (ռոզեոլա, վարակիչ էրիթեմա և այլն) անձի հետ համաճարակաբանական կապ ունեցող դեպք

6. Բնածին կարմրախտային համախտանիշի (այսուհետ՝ ԲԿՀ) դեպքի բնորոշում՝

1) կլինիկական չափանիշներն են՝ ցանկացած մինչև մեկ տարեկան երեխա, ում մոտ հայտնաբերվում է առանց որևէ (էթիոլոգիկ) պատճառի առնվազն երկու կլինիկական ախտանշաններ Ա խմբից կամ առնվազն մեկական բնածին վիճակ Ա և Բ խմբերից.

Ա խումբ	Բ խումբ
Նեյրոսենսոր լսողության խանգարումներ	Պուրպուրա
Սրտի բնածին արատներ	Սպլենոմեգալիա
Պիգմենտային ռետինոպաթիա	Միկրոցեֆալիա
Կատառակտ	Զարգացման ուշացում
Բնածին գլաուկոմա	Մենինգոցեֆալիտներ
	Ռադիոլուսենտ ոսկրային հիվանդություններ
	Ծնվելուց 24 ժամ հետո առաջացած դեղնություն

2) լաբորատոր չափանիշներ ԲԿՀ-ի հաստատման համար՝

ա. կարմրախտի իմունագլոբուլին Էմ (IgM) հակամարմինների հայտնաբերում կամ,

բ. կարմրախտի կայուն իմունագլոբուլին Ջի (IgG) հակամարմինների առկայություն 6-12 ամսական հասակում առնվազն 2 հետազոտությունների ժամանակ՝ եթե կատարված չէ պատվաստում կամ,

գ. կարմրախտի վիրուսի անջատում կամ,

դ. կարմրախտի վիրուսի ռիբոնուկլեինաթթվի (ՌՆԹ) հայտնաբերում հետադարձ, տրանսկրիպցիոն պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) մեթոդով:

7. Բնածին կարմրախտային համախտանիշի դեպքի դասակարգում

Կլինիկական ԲԿՀ-ի դեպք	Նորածին, ում մոտ բժիշկն առանց որևէ
-----------------------	------------------------------------

	ախտաբանական (էթիոլոգիկ) պատճառի հայտնաբերում է առնվազն երկու կլինիկական վիճակ Ա խմբից կամ մեկական Ա և Բ խմբերից
Լաբորատոր հաստատված ԲԿՀ-ի դեպք	Նորածին, ում մոտ առկա է առնվազն մեկ կլինիկական վիճակ Ա խմբից և համապատասխանում է բնածին կարմրախտային վարակի համար լաբորատոր չափանիշներին
Համաճարակաբանորեն կապված ԲԿՀ-ի դեպք	Նորածին, ում մոտ առկա է առնվազն մեկ կլինիկական վիճակ Ա խմբից և մայրը հղիության ընթացքում ունեցել է հաստատված կարմրախտ
Ժխտված դեպք	Նորածին, ում մոտ առկա է առնվազն մեկ կլինիկական վիճակ Ա խմբից, որը չի համապատասխանում ԲԿՀ-ի դասակարգումների հետ՝ կլինիկական, լաբորատոր հաստատված և համաճարակաբանորեն կապված

8. Բնածին կարմրախտային վարակի բնորոշում՝

Եթե մայրն ունի հաստատված կամ կասկածելի կարմրախտ հղիության ընթացքում, երեխան ունենում է կարմրախտային հատուկ իմունագլոբուլին Էմ (IgM) հակամարմինների նկատմամբ արյան հետազոտության դրական արդյունք: ԲԿՀ-ի կլինիկական ախտանշաններ չունեցող նորածինը դասակարգվում է բնածին կարմրախտային վարակակիր, եթե վերջինիս մոտ առկա է կարմրախտային հատուկ իմունագլոբուլին Էմ (IgM) հակամարմինների նկատմամբ արյան հետազոտության դրական արդյունք:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՆՄՈՒՇԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

Ախտորոշիչ թեստերն առավել զգայուն են ցանի ի հայտ գալու 4-28-րդ օրվա ընթացքում, հետևաբար արյան մեկ նմուշը, որը վերցվել է հիվանդից նշված օրերի ընթացքում, բավարար է կարմրուկի շճաբանական հետազոտության իրականացման համար:

Սակայն ցանավորումից սկսած 72 ժամվա ընթացքում նմուշառված արյան շիճուկի բացասական պատասխանը պետք է անպայման վերստուգել: Այդ պատճառով հիվանդից պետք է վերցնել արյան ևս մեկ նմուշ՝ ցանավորումից 72 ժամ անց: Կարմրուկին բնորոշ իմունոազլոբուլին Էմ (IgM) հակամարմիններն արյան մեջ հայտնաբերվում են նվազագույնը 28 օրվա ընթացքում, իսկ հաճախ՝ ավելի ուշ:

1. Նմուշառման տեխնիկա

Հիվանդից մանրէազերծված ներարկիչով վերցրած 3-5 միլիլիտր երակային արյունը տեղափոխվում է մանրէազերծ փորձանոթի մեջ: Անոթը պիտակավորվում է՝ նշելով հիվանդի տվյալները, արյունը վերցնելու և ցանի ի հայտ գալու ամսաթվերը:

Շիճուկի առանձնացման համար արյունն ենթարկվում է ցենտրիֆուգման՝ 1000 շրջապտույտով 10 րոպեի ընթացքում:

Արյունը չպետք է սառեցնել

Լաբորատորիայում ցենտրիֆուգի բացակայության դեպքում արյունը դրվում է թերմոստատ՝ + 37 աստիճան Ցելսիուս 20 րոպե տևողությամբ կամ սենյակային պայմաններում 2 ժամ տևողությամբ՝ մինչև մակարդուկի անջատումը (շիճուկի առանձնացումն էրիթրոցիտների մակարդուկից):

Զգուշորեն, խուսափելով էրիթրոցիտների վնասումից, շիճուկը տեղափոխվում է մեկ ուրիշ պիտակավորված և վարակազերծված պտուտակավոր կափարիչ ունեցող փորձանոթի մեջ:

Պիտակի վրա նշվում են հիվանդի տվյալները, կամ նույնականացման համարը (հիվանդության պատմության համարը կամ արտահիվանդանոցային հսկողության քարտի համարը), նմուշառման ամսաթիվը և նմուշի տեսակը:

Մինչ շիճուկի ուղարկելն այն անհրաժեշտ է պահել սառնարանում՝ +4 աստիճանից մինչև +8 աստիճան Ցելսիուս ջերմաստիճանի պայմաններում:

2. Արյան շիճուկի նմուշների պահպանումը

1) բուժկանխարգելիչ կազմակերպությունում, որտեղ վերցվել է արյան նմուշը՝

ա. եթե թեստավորման համար վերցրած արյան նմուշը վերցնելու պահից հնարավոր է 24 ժամվա ընթացքում տեղափոխել լաբորատորիա, ապա այդ դեպքում արյունը կարելի է պահել սառնարանում՝ +4 աստիճանից մինչև +8 աստիճան Ցելսիուս ջերմաստիճանի պայմաններում,

բ. եթե արյունը 24 ժամվա ընթացքում հնարավոր չէ տեղափոխել, ապա այն պետք է ցենտրիֆուգել,

գ. եթե չկա ցենտրիֆուգ, ապա արյունը պետք է պահել սառնարանում 24 ժամ՝ մինչև մակարդուկի առաջանալը, իսկ հետո շիճուկը հարկավոր է տեղափոխել այլ վարակազերծված փորձանոթի մեջ տեղափոխման համար,

դ. պիտակի վրա նշվում են հիվանդի տվյալները, կամ նույնականացման համարը (հիվանդության պատմության համարը կամ արտահիվանդանոցային հսկողության քարտի համարը), նմուշառման ամսաթիվը և նմուշի տեսակը,

ե. մանրէագերծված փորձանոթի շիճուկը կարելի է պահել կամ սառույցի վրա՝ 48 ժամ, կամ էլ սառնարանում՝ ոչ ավելի, քան 7 օր,

զ. երկարատև պահելու համար շիճուկը կարելի է սառեցնել -20 աստիճան Ցելսիուս, այնուհետև սառեցված սառցե էլեմենտների առկայության պայմաններում տեղափոխել լաբորատորիա: Շիճուկի կրկնակի սառեցումը և հալեցումն իմունոագլոբուլին էմ (IgM) հակամարմինների վրա կարող է ունենալ քայքայիչ ազդեցություն:

3. Արյան շիճուկի նմուշների տեղափոխում

1) **նմուշները պետք է տեղափոխել լաբորատորիա հնարավորինս կարճ ժամանակահատվածում: Չպետք է թողնել, որ առաջանան նմուշների կուտակումներ՝**

ա. նմուշները տեղադրել պլաստմասե տարրոդության մեջ,

բ. տեղափոխման համար օգտագործել թերմակոնտեյներ, թերմոս, կամ պենոպլաստե արկղ,

գ. պոլիէթիլենային ծրարի մեջ տեղադրած ուղեկցող փաստաթղթերը (լաբորատոր հետազոտության ուղեգիր) դնել թերմակոնտեյների կափարիչի կամ արկղի մեջ,

դ. եթե օգտագործվում են սառցային տարրեր (դրանք պետք է լինեն սառեցված), ապա վերջիններս տեղադրել թերմակոնտեյների (արկղի) հատակին և կողմնային մասերում, ներսում տեղադրել նմուշը, իսկ վերևից ծածկել սառեցված տարրերով,

ե. պայմանավորվել նմուշի տեղափոխման ժամանակացույցի մասին,

զ. տեղափոխման նախապատրաստական աշխատանքների ավարտից հետո տեղեկացնել ընդունողին՝ նմուշի առաքման ժամանակի և տեղափոխման միջոցի վերաբերյալ:

4. Իմունոագլոբուլին էմ (IgM) հակամարմինների հայտնաբերումը չորացրած արյան նմուշում

1) նախօրոք կտրել և պատրաստել ֆիլտրի թուղթը

Ս.Ս.Հ.-----
Ծննդյան տարեթիվը-----/-----/-----Տ/Կ
Նմուշի վերցման ամսաթիվը-----/-----/-----
OOOO

2) նախընտրելի է մատից արյունը վերցնել միջնամատից կամ անանուն մատից, բարձիկի կողքից, եղունգից 3 միլիմետր հեռավորության վրա.

3) մատը մշակել սպիրտով և թողնել չորանա.

4) ստերիլ, միանվագ օգտագործման հատուկ ասեղով ծակել մատը.

5) արյան առաջին կաթիլը սրբել չոր մաքուր թանգիֆով.

6) մեկական կաթիլ կաթեցնել ֆիլտրի թղթի յուրաքանչյուր օղակի վրա՝ համոզվելով, որ արյունը լրիվ ներծծվել է թղթին և ծածկել օղակի ամբողջ մակերեսը.

7) թողնել ֆիլտրի թուղթը չորանա (60 րոպեից ոչ պակաս) և դնել ծրարի մեջ (պոլիէթիլենի կամ փայլաթիթեղի).

8) պահել նմուշները սառը պայմաններում +4 աստիճան Ցելսիուս և հնարավորինս շուտ ուղարկել լաբորատորիա.

9) նմուշին կից ներկայացնել ուղեգիր՝

ՈՒՂԵԳԻՐ

ԿԱՐՄՐՈՒԿԻ ԵՎ ԿԱՐՄՐԱԽՏԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ

Ուղեգրող կազմակերպության անվանում, հասցե, հեռախոս, ֆաքս -----

Հիվանդի անուն, ազգանուն -----

Նախնական ախտորոշում -----

Նույնականացման համար -----

Հիվանդի բնակության հասցե, հեռախոս -----

Հիվանդի ծննդյան ամսաթիվ /օր/ամիս/տարի/ -----

Ցանավորման սկիզբ /օր/ամիս/տարի/ -----

Կարմրուկի և կարմրախտի վերջին պատվաստման ամսաթիվ /օր/ամիս/տարի/ -----

Դեպքը կապված է բռնկման հետԱյո Ոչ ՉՏ Բռնկման գրանցման համարը _____

Նմուշի համարը	Նմուշի տեսակ	Նմուշառման ամսաթիվ	Նմուշի տեղափոխման ամսաթիվ	Նմուշի լաբորատորիա ժամանման ամսաթիվ	Նմուշի վիճակ	Հետազոտության արդյունքի ամսաթիվ	Կարմրուկի թեսթ		Կարմրախտի թեսթ	
							IgM	այլ	IGM	այլ

Նկատառում`

- 1) նմուշի համարը պետք է համապատասխանի նմուշի տարողության վրա գրվածին,
 - 2) նմուշի տեսակը ներառում է շիճուկ, ամբողջական արյուն` հեպարինով, չոր արյան կաթիլ և այլն,
- -----Այլ մեթոդաբանություն (նշել)-----

Հետադարձ կտրոն -----

Նմուշի հետազոտության արդյունքները ստացող կազմակերպության (քաղաքացու) անվանում, հասցե, հեռախոս, ֆաքս -----

Հետազոտության արդյունք -----

Հետազոտությունն իրականացնողի անուն, ազգանուն -----

Ենթահավելված 3
Արցախի Հանրապետության
առողջապահության նախարարի
2019 թվականի մայիսի «3»-ի
N 104 -Ն հրամանի

**ԿԱՐՄՐՈՒԿԻ/ԿԱՐՄՐԱԽՏԻ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԴԵՊՔԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՔԱՐՏ**

Նույնականացման համար _____ Դեպքի գրանցման ամսաթիվը _____
Համաճարակաբանական հետազոտության ամսաթիվ _____ Համաճարակաբանական
հետազոտության քարտի ներկայացման ամսաթիվ _____

Նախնական դասակարգում կարմրուկ կարմրախտ ցան, տենդ
Դեպքը կապված է բնական հետ Այո Ոչ ՉՏ Բռնկման գրանցման համարը _____

Հիմնական տեղեկատվություն

Անուն, ազգանուն _____ Սեռը Արական Իգական

Ծննդյան ամսաթիվ /օր/ամիս/տարի/ _____ Հասցեն _____

Գրանցումն արվել է Բուժաշխատող Լաբորատորիա Ակտիվ փնտրում
Պատվաստումային կարգավիճակ
Կարմրուկ 1 2 >2 ՉՏ Վերջին պատվաստման ամսաթիվը _____
Կարմրախտ 1 2 >2 ՉՏ Վերջին պատվաստման ամսաթիվը _____
Պատվաստումային կարգավիճակի աղբյուր՝ Բժշկական փաստաթուղթ Ծնող Այլ
Հղիություն Այո Ոչ Հղիության ժամկետը _____ շաբաթ

Կլինիկական տվյալներ

Մակուլոպապուլոզ ցան Այո Ոչ ՉՏ Եթե այո, ի հայտ գալու ամսաթիվը _____
Տևողությունը (օր) _____
Առաջին ցանավորման տեղակայում՝ Ականջի հետևը Դեմքին Պարանոցին Կրծքին Այլ
Նկարագրեք _____

Այլ ախտանիշներ	Բարդություններ	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/>
Տենդ	Պնևմոնիա	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/>
Մուր ռինիտ	Հյուծվածություն	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/>
Հազ	Դիարեա	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/>
Կոնյունկտիվիտ	Էնցեֆալիտ	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/>

Աղենոպաթիա կամ արթրալգիա կամ արթրիտ Այո Ոչ ՉՏ Այլ

Հոսպիտալացում Այո Ոչ ՉՏ

Հիվանդանոցի անվանումը _____

Կլինիկական ելքը՝ Մահ Մահվան ամսաթիվը----- ----- Հսկողության դադարեցում

Անհայտ Մահվան պատճառը _____

Վարակի հնարավոր աղբյուրը

Շփվել է հիվանդը ցանավորումն ի հայտ գալուց 7-18 օր առաջ կարմրուկի կասկածով հիվանդի հետ կամ 12-23 օր առաջ կարմրախտի կասկածով հիվանդի հետ Այո Ոչ ՉՏ

Եթե այո, ապա ում հետ _____ (անուն, ազգանուն, նույնականացման համար)

Որտեղ _____ (երկիր, հասցե)

Երբ _____ (ամսաթիվ)

Տվյալ տարածքում մինչև տվյալ հիվանդի գրանցման պահը գրանցվել է՝ Կարմրուկ

Կարմրախտ Երկուսն էլ ՉՏ

Տվյալ հիվանդը ցանավորումն ի հայտ գալուց 7-23 օր առաջ գնացել է արդյոք ուրիշ տարածք Այո Ոչ ՉՏ

Եթե այո, ապա որ _____ (երկիր, հասցե)

Երբ _____ (ամսաթիվ)

Ճանապարհորդության մանրամասներ _____

Լաբորատոր տվյալներ

Նմուշառում կատարված է Այո Ոչ ՉՏ

Եթե Այո, նմուշի տեսակը՝ Շիճուկ Թուք/բերանի կենսասեղուկ Քիթրմպանային քսուք

Արյան չոր կաթիլ Մեզ Ամբողջական արյուն Այլ

Նմուշառման ամսաթիվ -----/-----/----- Նմուշի լաբորատորիա ուղեգրման ամսաթիվ -----/-----/-----

Կարմրուկի իմունագլոբուլին էմ (IgM) -ի նկատմամբ՝ Չի հետազոտվել Դրական

Բացասական Հետազոտման մեջ է Չպարզաբանված

Կարմրախտի իմունագլոբուլին էմ (IgM)-ի նկատմամբ՝ Չի հետազոտվել Դրական

Բացասական Հետազոտման մեջ է Չպարզաբանված

Կարմրուկի վիրուս՝ Չի հայտնաբերվել Դրական Բացասական Հետազոտման մեջ է Չպարզաբանված

Կարմրախտի վիրուս՝ Չի հայտնաբերվել Դրական Բացասական Հետազոտման մեջ է Չպարզաբանված

Վերջնական դասակարգում

0 Ժխտված

1 Կարմրուկ-լաբորատոր հաստատված 2 Կարմրուկ-համաճարակաբանական կապ

3 Կարմրուկ-կլինիկական

4 Կարմրախտ-լաբորատոր հաստատված 5 Կարմրախտ-համաճարակաբանական կապ

6 Կարմրախտ-կլինիկական

Վարակի աղբյուր

Համաճարակաբանական հետազոտությունը կատարվել է

Ա.Ա.Հ. _____ Պաշտոն _____

Համաճարակաբանական հետազոտության ամսաթիվը ____ - ____ - ____

Ստորագրություն _____

Նկատառումներ՝ _____

**ԲՆԱԾԻՆ ԿԱՐՄՐԱԽՏԱՅԻՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՔԱՐՏ**

Նույնականացման համար _____ Դեպքի գրանցման ամսաթիվը _____

Համաճարակաբանական հետազոտության ամսաթիվ _____ Համաճարակաբանական
հետազոտության քարտի ներկայացման ամսաթիվ _____

Տվյալներ երեխայի մասին

Երեխայի անունը _____ Ծննդյան ամսաթիվը ____ - ____ - ____ Համայնք
(Քաղաք, գյուղ) _____

Մեռը Արական " Իգական " Երեխայի ծնվելու վայրը _____ Ազգությունը _____

Երեխայի մոր անուն, ազգանուն _____ Ծննդաբերության վայր _____

Կլինիկական ախտանշաններ և բժշկական տվյալներ

Պտուղը (շաբաթներով) _____ Քաշը ծնվելիս (գրամ) _____

Խումբ Ա (Լրացնել բոլոր տողերը)	Խումբ	Բ (Լրացնել բոլոր տողերը)	
Սրտի բնածին արատ	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/>	Պուրպուրա	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/>
Կատարակտա	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/>	Միկրոցեֆալիա	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/>
Գլաուկոմա	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/>	Մենինգոէնցեֆալիտ	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/>
Պիզմենտային ռետինոպաթիա	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/>	Դեղնախտ	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/>
Լսողության վատացում	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/>	Սպլենոմեգալիա	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/>
Ոսկրային բարձր	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/>	Զարգացման ուշացում	Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/>
ռադիոանցանելությամբ			

հիվանդություն
 Այլ շեղումներ նորմայից Այո Ոչ Եթե այո, ապա նկարագրեք _____

Երեխային գնտոդ բժշկի ԱԱՀ _____
 Քաղաք/Գյուղ _____ Հեռախոսահամարը _____
 Երեխայի վիճակը ներկայումս ողջ է մահացել է
 Եթե երեխան մահացել է, նշել մահվան պատճառը _____

Աուտոպսիան անցկացվել է Այո Ոչ ՉՏ

ՉՏ՝ Չկա տեղեկատվություն

Տվյալներ մոր մասին/նախաձննդյան հսկողություն

Հղիությունների քանակն անամնեզում _____	Պատվաստվել է կարմրախտի դեմ Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/> եթե այո, պատվաստման ամսաթիվը _____
Մոր տարիքը (տարիներ) _____	
Կոնյունկտիվիտներ Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/> Եթե այո, սկզբի ամսաթիվը _____	Սուր ռինիտ Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/> եթե այո, սկզբի ամսաթիվը _____
Հազ Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/> Եթե այո, սկզբի ամսաթիվը _____	Մակուլոպապուլոզ ցան Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/> եթե այո, սկզբի ամսաթիվը _____
Ավշային հանգույցների մեծացում Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/> Եթե այո, սկզբի ամսաթիվը _____	Արթրալգիա/արթրիտներ Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/> եթե այո, սկզբի ամսաթիվը _____
Այլ բարդություններ Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/> Եթե այո, սկզբի ամսաթիվը _____	Եթե այո, նկարագրել _____
Մոր մոտ լաբորատոր հաստատվել է Հղիության ընթացքում կոնտակտ ցանով կամ տենդով հիվանդի հետ Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/> Հղիության ընթացքում շրջագայություն Որտեղ _____	Կարմրախտ Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/> եթե այո, որտեղ _____ երբ _____
Հղիությունների քանակն անամնեզում _____	Մակուլոպապուլոզ (ոչ վեզիկուլար) եթե այո, որտեղ _____ երբ _____
Մոր տարիքը (տարիներ) _____	Այլ տարածքներ Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/>
Հղիությունների քանակն անամնեզում _____	Պատվաստվել է կարմրախտի դեմ Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/> եթե այո, պատվաստման ամսաթիվը _____

Տվյալներ մոր մասին/նախածննդյան հսկողություն

Նմուշառում կատարվել է Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/>	Եթե այո, նմուշի տեսակը՝ Շիճուկ <input type="checkbox"/> Կոկորդի քսուք <input type="checkbox"/> Մեզ <input type="checkbox"/> Ուղեղոդնուղեղային հեղուկ <input type="checkbox"/> Այլ <input type="checkbox"/>
Նմուշառման ամսաթիվը -----/-----/-----	Լաբորատորիայի անվանումը -----
-	
Կարմրախտի IgM՝ Չի հետազոտվել <input type="checkbox"/> Դրական <input type="checkbox"/> Բացասական <input type="checkbox"/> Հետազոտման մեջ է <input type="checkbox"/>	Չպարզաբանված <input type="checkbox"/>
(*Կայուն IgG մակարդակ 6-12 ամսականում կատարված առնվազն երկու հետազոտության հետազոտվել <input type="checkbox"/> Դրական <input type="checkbox"/> Բացասական <input type="checkbox"/> ղեպքում)	Կարմրախտի վիրուս անջատում՝ Չի հետազոտման մեջ է <input type="checkbox"/>
Կարմրախտի ՊՇՌ Չի հետազոտվել <input type="checkbox"/> Դրական <input type="checkbox"/> Բացասական <input type="checkbox"/> Հետազոտման մեջ է <input type="checkbox"/>	Գենոտիպ <input type="checkbox"/>
Նմուշառում կատարվել է Այո <input type="checkbox"/> Ոչ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/>	
Նմուշառման ամսաթիվը -----/-----/-----	Լաբորատորիայի անվանումը -----
-	
Կարմրախտի IgM՝ Չի հետազոտվել <input type="checkbox"/> Դրական <input type="checkbox"/> Բացասական <input type="checkbox"/> Հետազոտման մեջ է <input type="checkbox"/>	Չպարզաբանված <input type="checkbox"/>
(*Կայուն IgG մակարդակ 6-12 ամսականում կատարված առնվազն երկու հետազոտության ղեպքում)	

Դեպքի վերջնական դասակարգում

ԲԿՀ <input type="checkbox"/> Ժխտված <input type="checkbox"/> Եթե ժխտված է, նկարագրել _____
Լաբորատոր-հաստատված <input type="checkbox"/> Համաճարակաբանական կապ <input type="checkbox"/> ԲԿՀ կլինիկական <input type="checkbox"/>
Բերովի <input type="checkbox"/> Բերովի դեպք չէ, կապ չունի բերովի դեպքի հետ <input type="checkbox"/> Կապված է բերովի դեպքի հետ <input type="checkbox"/> ՉՏ <input type="checkbox"/>
Ա.Ա.Հ. _____ Պաշտոն _____
Համաճարակաբանական հետազոտության ամսաթիվը _____ Դիտողություններ _____
Ստորագրություն _____

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ**

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ